ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2016 թվականի N:293-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՌՈՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի

նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Նելլի Փահլևանյանի 2016 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2013 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Նելլի Փահլևանյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված և 2013 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Նարեկ Միրզոյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2013 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Սամվել Մարտիրոսյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2013 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Պավլիկ Դավթյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը:

5. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2013 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Անուշ Գևորգյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը:

6. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Խորհրդի կազմում հաստատված Գյուլնարա Գալստյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի հոկտեմբերի 10-ը:

7. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2013 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի կազմում հաստատված Վարդան Ջատիկյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը:

8. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Խորհրդի կազմում հաստատված Վոլոդյա Հարությանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի հոկտեմբերի 10-ը:

9. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Մերուժան Սահակյանին:

10. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

11. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N83 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հուլիսի «14» N293-ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՌՈՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Միրզոյան Նարեկ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Սահակյան Մերուժան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Մարտիրոսյան Սամվել	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Դավթյան Պավլիկ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Գալստյան Գյուլնարա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Գևորգյան Անուշ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Զատիկյան Վարդան	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Հարոյան Վոլոդյա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է